վանքի հետ մինչև վերջին դարերը, ըստ վկայութեան Սիմէոն կաթուղիկոսի, որ հիմնուած էր պատմական աւանդութեան վերայ, և որի համար հաւանական ապացոյցներ ունինք ԺԳ. և ԺԵ. դարերում (1)։ Արձանագրութիւնների և գրաւոր յիշատակարանների պակասութիւնն ընդհանրապէս ԺԱ. դարի կէսերից սկսած մինչև ԺԲ.ի կէսերը, երբ սկսում է հոգևոր կեանքի մի նոր բողբոջ, յատուկ է մեր բոլոր վանքերին. սելջուկեան սարսափների տակ դադարել էր, գրեթէ, հայ շինարարութիւնը, դորա հետ և վիմական տարեգրութիւնը մինչև ԺԲ. դարի վաթսունական թուականները։ Մերձակայ Այրիվանքում եւս այս շրջանի հնագոյն արձանագրութիւններն սկսւում են 1163 թուականից։ Դարի վերջին տասնամեակից մի նշանաւոր ձեռագիր ունինք այդ վանքում, որի յիշատակարանի մէջ խօսք կայ և Աստուածընկալ սուրբ նշանի մասին, որ կարծում ենք մեր պատկերն է, խաչի վերայ փորագրուած (1)։

Արդեօ՞ք նոյն չէ սա այն Մխիթարի հետ, որ յատուկ արձանագրութիւն ունի ժամատան դուրսն ընկած խոյակներից մէկի վերայ, որի համաձայն յիսուն դահեկան է նուիրել վանքին և մի ժամ ստացել տարին (պարկ. 9).

Պատկեր 9

Ժամատան խոյակներից մէկը.

(1) Փիրղալէմեան. Նոտարբ. 221։ Ձեռ. էջմ. N 1124|2838 (Յաել. 2)։

(1) Ձեռ. էջմ. N 482 փ. ց. մեծադիր եւ հին Տաւնապատմառը, գրուած ՈԼԹ = 1190 թուին թղթի վերայ, արեւելեան խոշոր բոլորգրով (անցման երկաթագիր), Այրիվանքում. տե՛ս մեր Գրչ. Ար. Գ. §65։ ՈԽԹ = 1200 թուին նուիրուած է «յածընկալ սր նշին» Գրիչ Փիլիպպոս բահանայի ձեռքով. «հըրամանաւ տն Գրիգորիսի սպասաւորի սր նշանի», որ խոստանում է չորս պատարագ նուիրատուին. իր մահուանից յետոյ «սպասաւորք սր նշանիս» պարտաւոր են կատարել այդ խոստումը։ Ձեռագիրը նշանաւոր է եւ իր կազմով ՈԽ թուականից ցաւղիկ անունով մի կնոջ արդիւնքով եւ Ակոբ բահանայի ձեռքով։